

Սակայն եւ այնպէս Gadara անունը կը թուի թէ պահուած է քաղաքին հարաւային կողմը Aïn Djâdour ըսուած աղբիւրին անունով:

Salton Hieraticon Պոսրայի քորեպիսկոպոսական քաղաք մ'էր յիշատակարանի մը համաձայն, կամ Բեսորայի՝ ըստ տարբեր յիշատակարանի: Սաչակրաց ժամանակն Պաղտին Ա. տարեկան տուրքեր հաւաքեց Աճլունի լեռներէն և «Սալթի չըջականերէն»:
Հաւանական է որ Պրանկները նորոգեցին միջնաբերդը որուն աւերակը կը տեսնուի հիւսիսային-արեւելք: Ենթաշինուածներու մեծ յօրինուածքը ցոյց կու տայ հռովմէական կամ բիւզանդական ծագում մը: Միւս կողմէն արաբ հեղինակները մեզ կը սորվեցնեն թէ 1260ին Մոնկոլներու կողմէն միջնաբերդը քանդուած և 1266ին Պիպարսի կողմէն վերաշինուած է: 1840ին Իպրահիմ փաշան օդը հանեց դայն:

Քաղաքը ամփիթատրոնի ձևով կը տարածուի իրար միացող երկու բլուրներու վրայ: Ի սկզբան ան կը գտնուէր միջնաբերդի աւերակներուն հիւսիսային զառիվայրին վրայ. ժողովրդեան աճումով նոր թաղեր կազմուեցան հարաւ-արեւմուտքի կողմի հաւառակ զառիվայրին վրայ: Քաղաքը աջ ու ձախ ունի արգասաբեր հովիտներ գեղեցիկ այգիներով և պարտէզներով: Բնակիչներն են իսլամ, յոյն և լատին. վերջիններս ունին եկեղեցի եւ դպրոց: Իսլամ եւ քրիստոնեայ իրենց լեզուին, բարքերուն եւ սովորութեանց մէջ պահպանած են շատ կապեր թափառաչրջիկ ցեղերու յատուկ:

Էս-Սալթի գինին ընտիր է և չամիչները համբաւաւոր: Հոն շատ կը մշակեն ազտորը (sumac) զոր խաղախորդութեան համար կ'արտածեն: Այս քաղաքին փոքր ճարտարարուեստին կը միանայ շահագործութիւնը ֆոսֆատային կուլիճի՝ զոր Blankhorn գտած է Sirouի սարահարթին վրայ, դէպ ի արեւելք: Անգղիական ընկերութիւն մը փորձեց շահագործել այս հանքերը. բայց յետոյ հրաժարեցաւ անկէ՝ շահաւոր չգտնելով զայն: Կանոնաւոր ճանապարհներ շինուած են Սալթէն Ամման (Meistermann, Guide du Nil au Jourdain, էջ 314-6):

1321ին Ապուլ-Ֆէտա արաբ պատմագիրն ալ տեղեկութիւններ ունի Սալթի վրայ: